ԱՐՄԻՆԵ ԴԱԼԼԱՔՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
ՆԱԻՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՂՋԻԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ (XIX դար)

Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը:
Գարեգին Նժդեհ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.163

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ամփոփ դիտարկել ենք մինչև XIX դարն ընկած ժամանակաշրջանի հասարակական և մշակութային կյանքում նշանակալից հետք թողած հայ մտավորականներին, ներկայացրել նրանց հայացքները, վեր հանել նրանց ձեռքբերումները, մասնավորապես հայ կնոջ կերպարի հայեցի դաստիարակության և ձևավորման գործում: Ուսումնասիրել և ներկայացրել ենք Արևմտյան Հայաստանի մի շարք իգական վարժարանների կրթական գործունեության առանձնահատկությունները, արժևորել դրանց անգնահատելի դերն ու նշանակությունը ոչ միայն ազգային ինքնությունը պահելու, փայփայելու, այլև հայ կնոջ՝ իբրև հասարակության լիիրավ անդամի կրթության միջոցով իրավահավասարության ու ազատության հասնելու պահանջմունքի գիտակցման գործում:

Բանալի բառեր և արտահայտություններ. *նախագծային աշխատանք, օրիորդաց վարժարաններ, կանանց իրավունքներ, ասեղնագործություն, ազգային դիմագիծ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ հիմնախնդրի նախագծային աշխատանքի ուսումնասիրությունն իրականացրել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի

կրթական ծրագրի 1–ին կուրսի ուսանողները՝ դասախոս–ուսանող համատեղ համագործակցության ձևաչափով՝ մասնակցելով «Ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով նախագծին: Ուսումնական նախագծային աշխատանքն իրականացվել է հետևյալ փուլերով.

- ***Նախագծման փուլ***՝ թեմայի ընտրություն,հիմնահարցի ձևակերպում,խմբերի և ենթախմբերի քայլերի հաջորդականության պլանավորում:
- ***Իրականացման փուլ***՝ կանխատեսման, խմբերի աշխատանքների հետազոտական հարցերի առաջադրում, հետազոտական, որոնողական հնարների կիրառում:
- ***Ռեֆլեքսիվ փուլ***՝ ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ, ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացում, պատճառահետևանքային կապերի վերհանում, իրականացրած հետազոտական աշխատանքի՝բովանդակային և գործնական մասերի փուլային վերլուծություն և համակարգում:
- ***Հետնախագծման փուլ***՝ խմբերի աշխատանքի արդյունքների կանոնակարգում և ներկայացում, ստացված նախագծի առաջադրում, գնահատում և ամփոփում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքն իրականացնելիս կիրառել ենք նախագծային ուսուցման տեխնոլոգիան համապատասխան՝ փուլերով, օգտվել պատմահամեմատական, մանկավարժական առաջավոր փորձի ընդհանրացման մեթոդներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կրթված կանայք հասարակության համար գանձ են:

Մխիթար Գոշ

«Դատաստանագիրք» (12-րդ դար):

Սփյուռքում ազգային արժեքների և ավանդույթների պահպանմամբ՝ հայ կնոջ կերպարի ձևավորման և զարգացման գործընթացն այսօր էլ համարվում է արդիական: Եվ չնայած այն հանգամանքին, որ XIX դարի դարից մինչև մեր օրերը

մարդկության քաղաքակրթությունը բարձր վերելք է ապրել, այնուամենայնիվ առկա լուրջ մարտահրավերները մեզ ստիպում են վերանայել մեր առաջնահերթությունները՝ հատկապես կրթական գործընթացում նոր ռազմավարությունների մշակման և մոտեցումների իրականացման հարցում:

Նախագծային աշխատանքում ուսումնասիրվել են մինչև XIX դարը Արևմտյան Հայաստանի՝ Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Մարաշի օրիորդաց վարժարանները և Ուրֆայի «Հայ կանանց կարի դպրոցի» գործունեությունը՝ լուսաբանելով տվյալ ժամանակաշրջանով պայմանավորված իգական սեռի ուսուցման և դաստիարակության բնորոշ առանձնահատկությունները, տարբերիչ գծերը:

Չնայած թուրքերի որդեգրած հայաջինջ քաղաքականությանը, դեռ հնագույն ժամանակներից սկսած հայերը միշտ էլ ունեցել են տարաստիճան դպրոցներ, որոնցից մի մասը շարունակաբար գործում են Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում առ այսօր:

Ուշագրավ է այն փաստը, որ դեռևս XIX դարի 60-ական թվականներին հայ իրականության մեջ բարձրացվել էր աղջիկների դաստիարակության և կրթության հարցերը՝սեռով պայմանավորված խտրական մոտեցումները: Սակայն, որքան էլ զարմանալի է, կանանց հասարակական գործունեությունն առավել ակտիվ էր Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո, առաջին հերթին՝ Կոստանդնուպոլսում, որտեղ օրիորդաց վարժարաններն ավարտելուց հետո հայ կանանցից շատերը շարունակում էին իրենց ուսումնառությունը Եվրոպայում: Դրանով էր պայմանավորված XIX դարի վերջում Կոստանդնուպոլսում հատկապես հասարակական ակտիվ գործունեություն ծավալող շատ հայտնի Սրբուհի Տյուսաբը (Վահանյան), ով առաջիններից մեկն էր, որ իր ստեղծագործություններում, ինչպես նաև հրապարախոսական հոդվածներում դարձավ ֆեմինիստական շարժման ազդարարը, որին հետևեցին Սիպիլը, Զապել Եսայանը, Անահիտը, Զարուհի Գալաքմերյանը և ուրիշներ **(Ոսկանյան Շ., 2009)**:

Հայ կին գործիչները, ոգեշնչված եվրոպական լուսավորչական գաղափարներով, նաև արևմտահայ իրականության մեջ բարձրաձայնում են ամենատարբեր հարցեր կանանց իրավահավասարության վերաբերյալ, դատապարտում էին տղամարդու բռնությունները կնոջ նկատմամբ, որն էլ հիմք դարձավ՝ «Կանանց իրավունքների հռչակագիր» նախագծի ստեղծման համար: Հռչակագրի դրույթները հետևյալն էին.

- հավասար իրավունքներ տղամարդկանց և կանանց համար, մասնագիտության ընտրության իրավունք,
- երկակի բարոյախոսության ստանդարտների վերացում, որոնցից ամուսնական կյանքում օգտվում են տղամարդիկ,
- բարձրագույն կրթություն ստանալու իրավունք՝ որպես երեխայի դաստիարակության բարելավման միջոց,
- համայնքի գործունեության մեջ կանանց հավասար մասնակցության իրավունք,
- օժիտի սովորույթի վերացում,
- ազգի պահպանման և նրա մշակույթի փոխանցման մեջ կնոջ դերի ընդունում:

Օսմանյան կայսրությունում հայկական առաջին դպրոցները հիմնվել են 1790-ական թթ.՝ Կ. Պոլսում՝ հիմնականում եկեղեցուց ստացված հասույթով կամ հայության միջոցներով ու նախաձեռնությամբ: Արդեն 1866թ. դրությամբ՝ Կ. Պոլսում գործել է 46 հայկական դպրոց (32 արական, 14 իգական)՝ 4700 աշակերտ, 1472 աշակերտուհիներով և 142 ուսուցիչներով: XIX դարի կեսերից սկսած երկսեռ վարժարաններ են հիմնվել նաև Արևմտյան Հայաստանի բոլոր գավառական կենտրոններում, ապա նաև գյուղերում: Հայկական առաջին դպրոցների և երկսեռ վարժարանների հիմնումը կարևոր իրադարձություն էր արևմտահայության կյանքում:

1865 թվականին Կ. Պոլսի Գում-Գաբու թաղամասում որպես երկսեռ նախակրթարան բացվեց Մեզպուրյան վարժարանը: Անշուշտ, անգնահատելի է

Մեզպուրյան վարժարանի դերակատարությունը տվյալ ժամանակաշրջանում վարժուհիներ և դաստիարակչուհիներ պատրաստելու գործում, և քանի որ վարժարանի համբավը տարածված էր Կ. Պոլսի սահմանների դուրս՝այն ավարտած նվիրյալ ուսուցիչները գործուղվում էին շրջաններ՝ շարունակելու իրենց առաքելությունը: Այս առումով «Ծաղիկը» արձանագրում է. «Վստահութեամբ կրնամք հայտնել թէ սոյն շահավոր տնօրինութեամբ շատ գաւառ կ'ունենայ ընտիր և պարկեշտ դաստիարակուհիներ իւր վարժարանաց համար, և այդ կերպիվ մեր վարժարանը գոհացուցած կ'ըլլայ սոյն մեծ պահանջն որով հաճախ կը դիմեն մեզ խնդրանոք վարժուհվոյ»:

Վարժարանն ուներ ցերեկային ու գիշերօթիկ բաժիններ:

Վարժարանում դասավանդվում էին հետևյալ առարկաները՝ հայերեն, ֆրանսերեն, օսմաներեն (նախասիրությամբ), տեսական ու գործնական, առտնին (տնային.- Շ.Ո.) տնտեսություն, գործիքային և ձայնական երաժշտություն (սոլֆեջիո), դաշնամուր, նոտագրություն, կար ու ձև, ձեռագործ **(Ոսկանյան Շ., 2012)**:

1869 թվականին Կ. Պոլսում հիմնվեց Ազապյան երկրորդական իգական վարժարանը, իսկ 1876 թվականին Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում բացվեց Գուրգենի Հայկական Կրթարան **(Ոսկանյան Շ., 2012)**: Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ վարժարանների հիմնական նպատակը հայաբնակ գավառների համար մանկավարժներ պատրաստելն էր, վարժարաններն ունեցել են հարուստ կրթական ծրագրեր,կարողացել են ապահովել կրթության որակ,սակայն բացակայել են կրթության բովանդակությունն արտահայտող ուսուցման միասնական ծրագրերն ու պլանները և յուրաքանչյուր վարժարան ունեցել է իր ներքին «Կանոնադրությունը»՝ նպաստելով սփյուռքում ազգային դպրոցաշինության գործին:

Ինչպես տեսնում ենք Կ. Պոլսում XIX դարի կեսերից սկսած երկսեռ վարժարանների հիմնումը և կրթական գործի կազմակերպումը մեծ ազդեցություն է թողնում այդ ժամանակաշրջանում ընկած արևմտահայ դպրոցի ու մշակույթի

ձեռք բերած վիթխարի նվաճումների վրա, կնոջ և տղամարդու իրավահավասարությունների, կնոջ կրթության իրավունքի, հասարակության մեջ կնոջ ունեցած դերի կարևորության մասին, որով պայմանավորված տվյալ ժամանակաշրջանն աչքի է ընկել նշանավոր հայ կանանց տարբեր ոլորտներում ակտիվ ներգրավվածությամբ :

Հայկական դպրոցների պատմությանը նվիրված տարբեր հեղինակների ուսումնասիրություններում, որոնք անհասանելի են եղել հայ հասարակությանը, անդրադարձ է կատարվել այնպիսի դպրոցներին, որոնք առանձին ուսումնասիրության օբեկտ չեն հանդիսացել և մնացել են ստվերում:

Դրանցից է հանդիսանում 1831թ. Զմյուռնիայում բացված «Նունյան» վարժարանը, որն իր անունը ստացել է Սրբուհի Նունե կույսի պատվին և հետագայում այն լրիվ անվամբ հանդես է գալիս «Սուրբ Նունյան վարժարան աղջկանց»: Վարժարանի կառույցն ամբողջությամբ եղել է փայտաշեն:

Ցավոք սրտի, 1845թ. Զմյուռնիայում տեղի ունեցած մեծ հրդեհի հետևանքով այրվել է նաև Նունյան վարժարանը: Չեն մնացել անգամ տպագիր տեղեկություններ այս վարժարանի մասին:

Հրկիզումից հետո՝ 1872թ.,Գասպար Կյումյուճիյանի ծախսերով վերաբացվում է մի նոր վարժարան, որն ի հիշատակ նրա վախճանված կնոջ կոչվում է «**ՆՈՒՆՅԱՆ _ ՎԱՐԴՈՒՀԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**»: Վարժարանում դասավանդում էին՝լեզուներ (ֆրանսերեն, անգլերեն, հունարեն), ազգային ընդհանուր և եկեղեցական պատմություն, թվաբանություն, տոմարակալություն, բնագիտություն, բարոյագիտություն և այլն **(Նազիկյան Գ.,1969)**:

1868-1878թթ. զբաղեցնելով վարժարանի տեսուչի պաշտոնը՝ «Արևելյան մամուլ»-ի խմբագիր Մաթեոս Մամուրյանը արևմտահայ դպրոցների և մանկավարժության խնդիրները քննադատել է, սահմանափակել գրաբարի և բարոյագիտության դասերը՝ քարոզելով եվրոպական առաջավոր մանկավարժության նվաճումները, շեշտը դնելով գործնական առարկաների և

բնագիտության վրա, այն առանձնանում էր նաև իր դասավանդման մեթոդներով և կրում էր գործնական-կիրառական բնույթ:

Վարդուհեան օրիորդաց վարժարանում կրթական հենքը դրվել է հայ կին-մայր դաստիարակելու սկզբունքի վրա: Նպատակն էր՝ հոգատար և գրագետ մայրեր դաստիարակելը: Դպրոց են ընդունվել աղջիկներ՝ սկսած 6 տարեկանից, որոնք սովորել են հիմնական դասերը, բայց ունեցել են յուրահատուկ կանացի արհեստագործական հմտություններ՝ կար ու ձևը, ասեղնագործությունը, հատկապես հայկական թռչնատառերը:

Նշելի է, որ Վարդուհեան վարժարանի կրթական ուղին եղել է «Ա» և «Բ» մակարդակներով: «Ա» մակարդակը համարվել է նախակրթական կամ ստորին ուսմունք, հաճախել են 6-ից 14 տարեկան աղջիկները, որոնք սովորել են ընթերցանություն, գեղագիտական ճաշակ (երաժշտություն, նկարչություն և ձեռագործ աշխատանքներ), թվանշանների ընթերցում: «Բ» մակարդակը համարվել է ավարտական կամ բարձրագույն ուսմունք, որտեղ հաճախել են 14-ից 16 (կամ ըստ ցանկության 18) տարեկան օրիորդներ: «Բ» մակարդակների ավարտին՝ 16-18 տարեկան հասակում, դասավանդել են մանկավարժություն, հոգեբանություն և տրամաբանություն այն աղջիկների համար, որոնք ցանկացել են իրենց հետագա գործունեությունը ծավալել դպրոցներում: Ակնհայտ է նաև, որ վարժարանում ուսման նկատմամբ ձգտում ունեցող և առաջխաղացում արձանագրող սաներից են ընտրվել հետագայում դասավանդման գործունեությունը շարունակելու և, ինչու չէ, նաև դպրոցի լավագույն կրթական ավանդույթները պահպանելու և փոխանցելու ազնվագույն գործը:

Նկատենք, որ «**ՆՈՒՆՅԱՆ _ ՎԱՐԴՈՒՀԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**»-ում գործել է նաև հստակ սահմանված սովորողների գիտելիքների գնահատման հետևյալ չափանիշները.

- 6 թվանշանը՝ քաջալավ,
- 5 թվանշանը՝ լավագույն,
- 4 թվանշանը՝ լավ,

- 3 թվանշանը՝ միջակ,
- 2 թվանշանը՝ տկար,
- 1 թվանշանը՝ տկարագույն,
- 0 թվանշանը՝ անպիտան:

Վարդուհեան օրիորդաց վարժարանին հատուկ է եղել պատժի այն մեթոդը, որ ստեղծված կանոնակարգերի անհամապատասխանության կամ խախտման դեպքում՝ աշակերտին հանձնարարվում էր տնային աշխատանք՝ որպես պատիժ:Արդիական է և անշուշտ կարևոր դպրոցական կանոնադրության մեջ սահմանված մանկավարժական պահանջները և սովորողներին առաջադրված պարտականությունները **(Նազիկյան Գ.,1969)**: Իհարկե, վարժարանն ունեցել է իր ուրույն դաստիարակչական մեթոդները՝ աշակերտներին խթանելու, ուսման մեջ առաջընթացի տեսանկյունից, բայց մեր օրերում «պատիժ» հասկացությանը փոխարինում է բոլորովին այլ մոտեցում՝ «սահմանափակում», քանի որ ցանկացած բռնությունը երեխայի հանդեպ սկսվում է «պատիժ»–ից: Ավելին. անթույլատրելի է աշակերտներին պիտակավորել առավել ևս գնահատման նման սանդղակով, սակայն հաշվի առնելով ժամանակաշրջանը և գնահատման համակարգի զարգացման փուլը՝ մանկավարժական նման մոտեցումը ընդունելի է եղել մի շարք վարժարանների կողմից:

Արևմտահայ դպրոցի և մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի և պակաս ուշագրավ չեն նաև Մարաշի գավառն իր կրթական ավանդույթներով, որը ունեցել է հայ երեք համայնքներին պատկանող տասներկու եկեղեցի, բազմաթիվ դպրոցներ, որոնցից առավել հայտնի է Ազգային Կենտրոնական վարժարանը: Տեղի հայերն ունեցել են որբանոցներ, հիվանդանոցներ, աստվածաբանական ճեմարան, Աղջկանց բարձրագույն վարժարան, բարեսիրական միություններ, տպարան և այլն:

Մարաշի հայոց պատմությունն արձանագրող հեղինակների հավաստմամբ ի սկզբանե, երբ դեռ Մարաշի եկեղեցիներին կից դպրոցներ և ծաղկոցներ չկային, վանքի միաբանները իրենց ջուլհակի հորի կամ գործատեղի մեջ իրենց

աշակերտ--աշակերտուհիներին գրել-կարդալ էին սովորեցնում թախթա (տախտակ) կարդացնելով:

Թախթան քառակուսի տախտակ էր, որի վրա գրված էր այբուբեն, այն պարանով կախում էին աշակերտների վզից: Սա վկայում է այն մասին, որ Մարաշի հայությունը վաղուց ի վեր անտարբեր չի եղել ուսման և կրթության հանդեպ և հնարավորին չափով փորձել է նորահաս սերնդին փոխանցել մայրենի լեզվի հետ նաև կրոնական գիտելիքներ:Սակայն փաստենք, որ Մարաշում աղջիկների կրթությունը ոչ միայն անուշադրության էր մատնված և բարձիթողի էր, այլև իբրև ավելորդություն բոլորովին անտեսված էր: Տեղի հայությունը չափազանց պահպանողական էր, ինչը ստիպում էր նրանց ինքնամփոփ կյանք վարել՝ տեղի այլ ժողովուրդների հետ բախումներից, ընդհարումներից խուսափելու համար: Այս ամենին գումարվում են նաև նահապետական բարքերն ու սովորությունները, որոնք անջրպետ են իգական սեռի ուսման և կրթության ճանապարհին: «Աղջիկներուն թոյլատրուած չէր այն ատեն դպրոց երթալ, - իր յուշերուն մէջ կը պատմէ Վեր. Յ. Ճէնանեան,- արդէն անոնց համար դպրոց ալ չկար: Աղջկան մը դպրոց երթալը բոլորովին անտեղի կը նկատուէր: Երբեմն աղջնակներ կէսօրին իրենց եղբայրներուն ճաշ կը բերէին ու ակնարկ մը կը նետէին ներս՝ տեսնելու համար թէ ի՞նչի կը նմանէր դպրոցը: Խեղճե՜ր, ո՛րքաններ կը բաղձային այդ պատեհութեանց համար» **(Թորանեան Թ.,1988):** Հայկական շատ բնակավայրերի նման, Մարաշի մեջ նույնպես, աղջիկների կրթական գործի կազմակերպումը հայ բողոքականների շրջանում մեծ ալիք էր բարձրացնում: Եվ Մարաշում առաջին իգական վարժարանը հիմնվում է 1856 թվականին: Անկասկած և՛ արական, և՛ իգական կրթօջախների հիմնման և հետագա գործունեության ընթացքի համար մեծ դեր են խաղում արևմտյան միսսիոներական կազմակերպությունները: Այսպես, տարեցտարի զգալի է դառնում իգական վարժարանների անհրաժեշտությունը Մարաշում: Ավելի ուշ, Մարաշի բոլոր վեց եկեղեցիների մեջ բացվում են իգական հատուկ Ծաղկոց-նախակրթարաններ:

Իգական նախակրթարանների մասին մեզ են հասել ամփոփ տեղեկություններ, սակայն դա էլ բավական է հասկանալու համար, որ Մարաշի իգական սեռի կրթական մակարդակը մեծ առաջընթաց է արձանագրում 1880-ականներից սկսած, որի մեջ մեծ դեր է խաղում Մարաշի իգական վարժարանը, որը թեև ամերիկյան-բողոքական կրթօջախ էր, սակայն բաց էր բոլորի առջև, առանց դավանական խտրականության: Այն լայն հնարավորություններ ուներ բարձր ուսում տալու տեղի նախակրթարանների շրջանավարտ օրիորդներին:

Նշելի է, որ հայ առաքելական համայնքի նախակրթարաններ ավարտած աղջիկներից շատերը, իրենց ուսումը շարունակում էին վարժարանում, նրանցից շատերը դառնում էին ուսուցչուհի և աշխատում էին ազգային վարժարաններում: 1905 թ-ին Մարաշի իգական վարժարանի ուսանողուհիների թիվը եղել է 669: Շրջանավարտներից հատկապես հիշատակվում են տիկին՝ Հրանուշ Ազատյանը, օրիորդներ՝ Օվսաննա Քեոմպեճյանը, Էլմաս Սաղպազարյանը և ուրիշներ: Մարաշի իգական սեռի կրթությանը սատարում էր մի խումբ կրթասեր տիկինների կազմած «Հայուհիների ընկերությունը»: Ընկերության միջոցները գոյանում էին խմբի անդամների ամսավճարներից և նվիրատվություններից: Ընկերության շուրջ համախմբված տիկիններին՝ Թամամ Մուրադյան, Վարդիկ Փարթամյան, Համմալ Պուրումսուզյան և ուրիշներ, հաջողվում է Կենտրոնական վարժարանում կառուցել մի շենք, որը կծառայի որպես իգական վարժարան: Շենք կոչված այդ կառույցը եղել է երկայնաձև, միահարկ, համեստ մի շինություն: Բնականաբար, ինչպես մյուս բոլոր դպրոցները, աղջիկների այս վարժարանը կանոնավոր կերպով չի ծավալել իր գործունեությունը: Ինչ-ինչ պատճառներով, այն ժամանակ առ ժամանակ փակվել է : «Իգական սեռը դաստիարակելով՝ կը պատրաստենք ապագայ մայրը, հետեւաբար պատրաստած կ՛ըլլանք ապագայ առողջ ու դաստիարակուած սերունդը», նշում էին ժամանակակիցները:

Նկատենք՝ չնայած գործող բարքերին և մի շարք խոչընդոտների, Մարաշի իգական սեռի կրթությունը մեծ ներդրում էր 1880-1890 թվականներին Մարաշի կրթական կյանքի զարգացման գործում:

Դա ցայտուն վկայությունն էր այն բանի, որ Մարաշի իգական սեռի դպրոցի և դաստիարակության մեջ ներմուծվել են բազում մանկավարժական առաջավոր և կառուցողական գաղափարներ:

Նկատենք, որ XIX դարում երեխաների կրթության իրավունքներն անհավասար էին, ունևոր ընտանիքի աղջիկները հայերենի և ֆրանսերենի մասնավոր դասեր էին ստանում տանը, իսկ աղքատ ընտանիքի աղջիկները զրկված էին այդ հաճույքից: Գավառային վարժարանները լուծում էին անապահով ընտանիքի երեխաների կրթության հարցը, իսկ ապահովված ընտանիքի երեխաները հաճախում էին ոչ հայկական դպրոցներ: Բարերարների և հանգանակությունների միջոցով լուծվում էին անապահով ընտանիքի երեխաների կրթության հարցը:

Իգական սեռի կրթության հիմնահարցերը իրենց յուրօրինակ շեշտադրումն են ունեցել նաև Եդեսահայ բնակչության շրջանում: Տվյալ ժամանակաշրջանի հայկական Ուռհան համարվել է քաղաքակրթության հնագույն կենտրոններից, որն աչքի է ընկել իր բարձրագույն արհեստներով և արվեստներով, ճարտարապետական հիանալի կոթողներով և հուշարձաններով, երաժշտասեր հանրությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ 1890թ. հայերը կազմել բնակչության 40%-ը, իսկ սուլթան Համիդի ջարդերից հետո բնակչության թիվը կտրուկ նվազել է, այնուամենայնիվ հայերը լուրջ դերակատություն են ունեցել քաղաքի տնտեսական և մշակութային կյանքում:

Մեզ հասած տվյալներով,բավականին հայտնի է եղել «Հայ կանանց կարի դպրոցի» գործունեությունը:

«Ուրֆայի Գործ» անվանումը շատ հայտնի է ասեղնագործության մեջ: Ուրֆացի կանանց ձեռագործ արտադրությունները (թաշկինակ, սեղանի ծածկոց, բարձի երես, զգեստներ և այլն) յուրահատուկ են և տարբերվող:Ասեղնագործության այս տեսակները կոչվում էին «պուլուխթու» կամ «թաթարի» գործ: 1895թ.-ի ջարդերից հետո այս արհեստը մեծ թափ առավ.

1896թ. ամերիկյան որբանոցի մեջ՝ Քորինա Շաթթըքի նախաձեռնությամբ, ժողովրդի մեջ ծանոթ էր «Նշխին տուն» անունով: Այստեղ ուսուցանում էին ձեռագործի վարպետուհիներ՝ Շահմել Գալաճյանը, Խորոզենց Խանմը, վարպետ Հոռոմը, վարպետ Եվան և Հազարվարդ Թաշճեանը: Կարի դպրոցում ուսուցանվել են արվեստի և արհեստի տարբեր ուղղություններ. նկարչություն, պասմայագործություն (դրոշմատպություն), ոստայնագործություն (ալիճայի գործ), կտավագործություն:

«Ուռհայի ասեղնագործությունների հուզական ներգործության հիմնական միջոցը փափուկ և զուսպ գունահարաբերումներով ստեղծված կոլորիտն է» **(«Բնօրրան» պարբերաթերթ, 1996թ) :**

Սաթենիկ Պեզիկյանի և գերմանացի սպա Պրունօ Էքարտի շնորհիվ մեզ է հասել «Նշխին» տանը աշխատած զարդաձևերի ամբողջական 73 ձեռագործ հավաքածուն:

«Ուրֆայի զարդամոտիվներում գերիշխում են տերևազարդ ծաղիկներ պարզեցված և ոճավորված: Գույները մեղմ են, հաճախ զուգակցված ոսկեթել բանվածքով» **(Պրունօ Էքարտի հավաքածու Բերիոյ հայոց թեմ, 2014):**

Ուրֆայի արհեստանոցի հաջողությունն այնքան մեծ էր, որ Միս Շաթթըքը մի մասնաճյուղ էլ է բացում քաղաքի մոտակա Կարմունճ գյուղի մեջ, և մասնաճյուղի տնօրինությունը հանձնվում է Եվա Ալահայտոյանին: Այսպիսով, ուսումնասիրելով Ուրֆայի իգական սեռի կրթադաստիարակչական բնույթը, կարող ենք նշել, որ հայ կնոջ կերպարի ձևավորման մեջ գերիշխել է գեղագիտական դաստիարակության ուղղվածությունը, որը շարժառիթ է հանդիսացել ստեղծելու «Ուրֆայի Գործ»–ի յուրօրինակ և անկրկնելի գեղագիտական մեծ արժեք ներկայացնող արհեստի գործեր, որոնք իրենց վրա անմիջականորեն կրում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ մշակույթի,արվեստի ձեռքբերումները, հետևապես գեղարվեստական հսկա ժառանգություն են յուրօրինակ ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծելով XIX դարի առաջին տասնամյակներին օրիորդաց վարժարանների գործունեությունը,կարող ենք փաստել. վարժարաններում եղել են տարբեր կրթական ծրագրեր և ուղղվածություն,բացակայել են ուսումնական ծրագրերի ընդհանրական պահանջներ և չափանիշներ, յուրաքանչյուր վարժարան գործել է ըստ իր մշակած կանոնադրության, կրթությունը թեպետև ընդհանուր էր, սակայն առկա բոլոր մակարդակները հիմնականում հասանելի էին ունևոր ընտանիքի զավակների համար: Արևմտահայ իրականության մեջ իգական սեռի դատիարակության և կրթության հիմնախնդիրը գոյաբանական անհրաժեշտ պայման էր ոչ միայն ազգային գաղափարների, ավանդույթների և առանձնահատկությունների հետագա զարգացման գործում, այլև փաստագրումն է կրթության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի և արժեքային դիրքորոշման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **«Բնորրան»** պարբերաթերթ **(1996),**Երևան, https://historymuseum.am/wp-content/uploads/2024/09/%D5%80%D5%8A%D4%B9%D5%A1%D5%B7%D5%
2. **«Պրունօ Էքարտի հավաքածու. Ուրֆայի ասեղնագործություն» (2014),** Բերիոյ հայոց թեմ, https://www.academia.edu/21517475/%D5%91%D5%A5%D5%B2%D5%A1%D5
3. **Թորանեան Թ.(1988),** Մեսրոպեան Կեդր. երկսեռ վարժարանը, 65 տարի հայ սերունդների ծառայության մեջ, Հալէպ, «Յոբելենական» հրատ.:
4. **Նազիկյան Գ. (1969),** Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, «Լույս» հրատ.:
5. **Ոսկանյան Շ. (2012),** Արևմտահայ դպրոցի կրթության և մշակույթի նշանավոր գործիչները (1850-1920 թթ.), Երևան, «Մանկավարժ» հրատ.:
6. **Ոսկանյան Շ. (2009),** Ուրվագծեր արևմտահայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության (1850-1920 թթ.), Երևան, 2-րդ հրատ.,
7. http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_13.php
8. https://www.houshamadyan.org
9. http://lousavor-avedis.org/?p=20748

REFERENCES

1. **«Bno'rran»** parberat'ert'/ **«Bnorran»** newspaper/ **(1996),**Yerevan. https://historymuseum.am/wp-content/uploads/2024/09/%D5%80%D5%8A%D4%B9%D5%A1%D5%B7%D5%
2. **«Prowno' E'qarti havaqac'ow. Owrfayi aseghnagorc'owt'yown» /«Pruno Ecart's collection: Ourfa neeldework»/ (2014),** Armenian Diocese of Beroea. https://www.academia.edu/21517475/%D5%91%D5%A5%D5%B2%D5%A1%D5

3. **Toranean T. (1988)**, Mesropean Kedr. erkser' varjharany', 65 tari hay serowndneri c'ar'ayowt'yan mej /Mesropean central bisexual school, 65 years in service of the armenian generations/, Aleppo, "Aniversary" ed.
4. **Nazikyan G. (1969),** Arevmtahay mankavarjhakan mitqn ow dprocy' /Western armenian pedagogical mind and school/, Yerevan, «Luys» publishing house.
5. **Voskanyan SH. (2012)**, Arevmtahay dproci krt'owt'yan ev mshakowyt'i nshanavor gorc'ichnery' (1850-1920 t't'.) / The prominent figures of education and culture of the western armenian school (1850-1920yrs.)/, Yerevan, Pedagogy ed.
6. **Voskanyan Sh. (2009)**, Owrvagc'er arevmtahay dproci ev mankavarjhakan mtqi patmowt'yan (1850-1920 t't'.) /Outlines of the western Armenian school and the history of pedagogical mind, (1850-1920yrs.)/, Yerevan, Second ed.
7. http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_13.php
8. https://www.houshamadyan.org
9. http://lousavor-avedis.org/?p=20748

Армине Даллакян, Лусине Погосян, Наира Мартиросян

Фундаментальная проблема воспитания и образования в в школах для девочек в западной Армении (XIX век)

Заключение

Ключевые слова и выражения: *Проектная работа, школа для девочек, права женщин, вышивка, национальные черты.*

В статье мы кратко рассмотрели представителей армянской интеллигенции, оставивших значительный след в общественной и культурной жизни периода до XIX века, представлени их взгляды, выделили их достижения, в частности в области армянского воспитания и формирования образа армянской женщины.

Мы изучили и представили особенности просветительской деятельности ряда женских лицеев Западной Армении, придали важности их неоценимой роли и значению не только в сохранении национального, поддержании и лелеянии национальной идентичности, но и в осознании потребности достижения равенства в правах и свободе через воспитание армянской женщины как полноправного члена общества. В статье также рассматривается важная миссия женских лицеев того периода, где подчеркиваются не только их образовательные традиции, но и социальное неравенство и дискриминационное отношение к детям из бедных семей. Представлены также известные учителя и выпускники лицея. Охарактеризованы вопросы школьного управления, учебных программ и их соответствии к современным образовательным стандартам.

Armine Dallakyan, Lusine Poxosyan, Naira Martirosyan

Fundamental problem of upbringing and education in schools for girls in western Armenia (XIX century)

Conclusion

Key words and expressions: *Project work, school for girls, women rights, needlework, national lineament.*

In the article, we briefly presented the Armenian intellectuals who left a significant mark in the social and cultural life of the period up to the 19th century, observed their views, highlighted their achievements, particularly in formation and upbringing of the image of the Armenian woman. We studied and presented the features of the educational activities of a number of women's colleges in Western Armenia, we emphasized their invaluable role and importance not only in preserving, maintaining and nurturing the national identity, but also in realizing the need to achieve equality in rights and freedom through the education of Armenian women as a

full-fledged member of society. The article addresses the important mission of female colleges of the period, highlighting not only their educational traditions, but also the social inequality and discriminatory attitude towards children from poor families. Eminent scholars and alumni of the High School have been presented. Matters concerning the High School management, curricula and their alignment with contemporary educational standards have been characterised.

Արմինե Դալլաքյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ տեսական մանկավարժություն, ուսուցչիների մասնագիտական կոմպետենցիաների և նորարական մոտեցումների ուսումնասիրումը տարրական դպրոցում:Հեղինակ է շուրջ երեք տասնյակից ավելի գիտամեթոդական հոդվածների: armine.dallakyan.75@mail.ru

Լուսինե Պողոսյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հումանիստական մանկավարժություն, մանկավարժական մարդաբանություն, մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն: Հեղինակ է շուրջ հիսուն հոդվածի: poghosyanlm@gmail.com

Նաիրա Մարտիրոսյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ տեսական մանկավարժություն, գործնական մանկավարժություն, սոցիալական մանկավարժություն, կրթության և մանկավարժական մտքի պատմություն: Հեղինակ է երեք տասնյակից ավելի հոդվածի: mnaira72@mail.ru

Армине Даллакян- Преподаватель кафедры педагогики АГПУ им. Х. Абовяна, кандидат педагогических наук, доцент. Сфера научных интересов: новые подходы системы оценивания и профессиональной компетенции учителей в начальной школе : Автор около трех десятков статей . 077123021 armine.dallakyan.75@mail.ru

Лусине Погосян – Преподаватель кафедры педагогики АГПУ им. Х. Абовяна, кандидат педагогических наук, доцент. Научные интересы: гуманистическая педагогика, педагогическая антропология, методология педагогических исследований. Автор около пятидесяти статей. poghosyanlm@gmail.com

Наира Мартиросян - Доцент кафедры педагогики АГПУ им. Х. Абовяна, кандидат педагогических наук. Научные интересы: теоретическая педагогика, практическая педагогика, социальная педагогика, история образования и педагогической мысли. Автор более трех десятков статей. mnaira72@mail.ru

Armine Dallakyan – Phd, lecturer at the Department of Pedagogy of Khachatur Abovyan ASPU, candidate of pedagogical sciences, associate professor. Scientific interests: Theoretical Pedagogy, Study of Elementary School Teachers' Competency, Study of Innovative Technologies at Elementary School. Author of about of more than three dozen articles. 077123021 armine.dallakyan.75@mail.ru

Lusine Poghosyan - Lecturer at the Department of Pedagogy of Khachatur Abovyan ASPU, candidate of pedagogical sciences, associate professor. Research interests: humanistic pedagogy, pedagogical anthropology, methodology of pedagogical research. Author of about fifty articles. poghosyanlm@gmail.com

Naira Martirosyan - Associate Professor of the Department of Pedagogy of the Kh. Abovyan ASPU, M.Sc. Scientific interests: theoretical pedagogy, practical

pedagogy, social pedagogy, history of education and pedagogical thought. Author of more than three dozen articles. mnaira72@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 01.11.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 21.11.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.